ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/12

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Թալինի համայնքապետարան
Բողոք բերող՝«Արմստրոյ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Արմստրոյ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Գասպարյանի
Պատվիրատու՝ Թալինի Համայնքապետարանի ներկայացուցիչ՝ Ա. Հովհաննիսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-20/03» ծածկագրով գնանշման հարցում, Թալին համայնքի ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Արմստրոյ» ՍՊԸ-ի, (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) կողմից 05.02.2020թ.-ին ներկայացված բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ «Արմստրոյ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով խնդրել է՝ դադարեցնել «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-20/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 29.01.2020թ.-ի թիվ 2 արձանագրությունը և պարտավորեցնել պատվիրատուին կայացնել որոշում նույն ընթացակարգի արդյունքում «Արմստրոյ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ կամ չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 05.02.2020թ.-ին և 06.02.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ ու 13.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 13.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 28.02.2020թ.-ին:

2. <u>«Արմստրոյ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Արմստրոյ» ՍՊԸ-ն 05.02.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-20/03 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից 21.01.2020 թվականին հրապարակվել է հրավեր Թալինի համայնքի Թամամցիներ, Մեխանիզատորներ, Կոմիտաս և Շիրազի փողոցների ասֆալտապատման նուսխագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման համար:

21.01.2020 թվականին հրապարակված հրավերին համապատասխան «Արմստրոյ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտ:

Հայտերը բացվել են և 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է հայտարարվել Գեոքարտ ընկերությունը:

29.01.2020թ.-ին հանձնաժողովը թիվ 2 արձանագրությամբ մերժել է Բողոքաբերի հայտը Հավելված 2-ի գնային առաջարկի սխալ լրացնելու հիմքով:

21.01.2020 թվականի թիվ 2 որոշմամբ հրավերը փոփոխվել է /հրապարակվել է 22.01.2020 թվականին/, որի հիմնավորում նշվել է հետևյալը. «Արագածոտնի մարզի Թալինի համայնքապետարան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-20/03

ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սրորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Տեխնիկական վրիպակ:

Փոփոխության նկարագրություն. Ընթացակարգի հրավերը հայտարարվել էր գնանշման հարցման հին օրինակելի ձևով, որտեղ բացակայում էր որակավորման ապահովման պահանջը և առկա էր ՊԵԿ-ի հարցման պահանջը: Միաժամանակ հրավերով լիցենզիայի պահանջ էր դրվել, որի պահանջը փոխարինվում է որոկովորման ապահովման տուժանքով և վճարման պահանջագրով:

Փոփոխության հիմնավորում՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն որոշում»:

Գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետի համաձայն.

«1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:

Նշված նորմերից հետևում է, որ գնում կատարելու նպատակով մրցույթ հայտարարելու դեպքում այն պետք է իրականացվի այնպես, որ պահպանվեն մրցակցային

ոչ խտրական հիմունքներով մրցույթի անցկացման պայմանները և ապահովվեն թափանցիկությունը, արդյանավետությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

«1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ»:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ Կարգ/ 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն. «40. Բայտերի բացման և գնահատման նիստում՝

4) հանձնաժողովը մերժամ է, այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը»:

Տվյալ դեպքում վերը նշված նորմերով սահմանված է, որ հայտերի բացումից հետո հանձնաժողովը գնահատում է հայտերը, սկսելով առաջին տեղ ընտրված մասնակցի ընտրությունից: Հայտերը գնահատվում են բավարար, եթե համապատասխանում է հրավերին: Այսն գործով Բոդոքաբերը հրավերին համապատասխան ներկայացրել է հայտ, սակայն մերժվել է այն պատճառաբանությամբ, որ գնային առաջարկը սխալ է լրացված: Հարկ է նշել, որ գնային առաջարկում նշված բովանդակության մեջ առկա չէ տարբերություն, միայն առաջին հրավերում գինը ու շահույթը մեկ սյունակում է նշված, իսկ մյուսում երկուսում: Այսինքն հայտը պետք է գնահատվեր բավարար և Բոդոքաբերը

համարվեր առաջին տեղ զբաղեցրած մասնակից, քանի որ առաջարկել է ամենացածր գինը 1.100.000 ՀՀ դրամ:

Բացի այդ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն.

«Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Բաց մրցույթի դեպքում փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում, իսկ փակ մրցույթի դեպքում փոփոխությունները տրամադրվում են հրավեր ստացած մասնակիցներին:»:

Նշված նորմից հետևում է, որ հրավերում կարող է փուփոխություն կատարվել, իսկ այս դեպքում փոփոխվել է հրավերն ամբողջությամբ դրա իրավական հիմքերով հանդերձ, ինչից հետևում է, որ դա պետք է դիտվել նոր հրավեր և հրապարակվեր որպես այդպիսին: Հետևաբար եթե բողոք քննող անձը գտնի, որ բավարար չէ վերը նշված պատճառաբանությունը առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու համար պետք է հանձնաժողովին պարտավորեցնել ընթացակարգը չկայացած հայտարարել:»:

Ելնելով վերոգրյալից, «Արմստրոյ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ դադարեցնել «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-20/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 29.01.2020թ.-ի թիվ 2 արձանագրությունը և պարտավորեցնել պատվիրատուին կայացնել որոշում նույն ընթացակարգի արդյունքում «Արմստրոյ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ կամ չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

3. <u>Թալինի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 06.02.2020թ.-ի գրությամբ դիմել ՀՀ Թալինի համայնքապետարանին՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Արմստրոյ» ՍՊԸ-ի կողմից 05.02.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 10.02.20202.-ին թիվ 058/108 գրությամբ ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Բողոքաբերի՝ Արմստրոյ ՍՊԸ-ի ՀՀ ԱՄ ԹՀ-ԱՇՁԲ-20/03 ընթացակարգի հայտը մերժվել է գնային առաջարկը հրավերի պահանջին չհամապատասխանելու հիմքով և մերժման հիմնավորումը նշված է գնահատող հանձնաժողովի արձանագրությունում, որը հիմնավորվում է ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի թիվ N 526-Ն որոշման 32 կետով լրացված ՀՀ Կառավարության 10 հոկտեմբերի 2019 թվականի թիվ N 1422-Ն որոշմամբ

32). Հրավերով նախատեսվում է նաև, որ՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

2) մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընհանուր գնի սյունակը և տառերով, և թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.):

40).

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Փոփոխության մասին Հայտարարությունը սահմանված ժամկետում հրապարակվել է տեղեկագրում համաձայն ՀՀ գնումների մասին օրենքի 29-րդ հոդվածի 4 մասի համաձայն և հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանվել է հրապարակման օրվանից:

Հայտը մերժվել է ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի թիվ N 526-Ն որոշման պահանջների խախտման հիմնավորմամբ:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/12 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Թալինի համայնքապետարանի կողմից Թալին համայնքի ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների

ձեռքբերման նպատակով 21.01.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-20/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

22.01.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-20/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերում փոփոխություններ կատարելու մասին հայտարարություն (այսուհետ նաև՝ Հայտարարություն):

Հայտարարության համաձայն՝ Ընթացակարգի փոփոխության հիմք է հանդիսացել նույն ընթացակարգի հրավերը գնանշման հարցման հին օրինակելի ձևով հրապարակելը, որտեղ բացակայում էր որակավորման ապահովման պահանջը և առկա էր ՀՀ ՊԵԿ-ին ուղարկվող հարցման պահանջը: Միաժամանակ հրավերով լիցենզիայի պահանջ էր դրվել, որի պահանջը փոխարինվում է որոկովորման ապահովման տուժանքով և վճարման պահանջագրով: Փոփոխության հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն որոշումը:

Ընթացակարգի հրավերով սահմանված օրինակելի ձևի համաձայն՝ Հավելված 2-ը պետք է ներկայացնել հետևյալ ձևով.

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>				

Նույն հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արմստրոյ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը 28.01.2020թ.-ին ներկայացրել է գնային առաջարկ՝ հայտնելով, որ ուսումնասիրել է «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-20/03» ծածկագրով գնանշման հարցման հրավերը,

այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը և առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեքը (Ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Թալին համայնքի Թամանցիներ, Մեխանիզատորներ, Կոմիտասի և Շիրազի փողոցների ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	1 100 000		1 100 000

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ սահմանված ժամկետում ներկայացվել է 6 հայտ:

Նույն արձանագրության համաձայն՝ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն, «Արմստրոյ» ՍՊԸ-ն և Ա/Ձ Անահիտ Գևորգյանը հայտերը ներկայացրել են սխալ հավելվածներով՝ սխալ է լրացված Հավելված 2-ը (գնային առաջարկը), ուստի Հանջնաժողովը որոշել է նշված ընկերություններին ճշտման հնարավորություն չտալ և մերժել վերջիններիս հայտերը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Արմստրոյ» ՍՊԸ-ի կողմից 05.02.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը

հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից հաստատած դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Թալինի համայնքապետարանի կողմից Թալին համայնքի ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման նպատակով 21.01.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-20/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, իսկ 22.01.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-20/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերում փոփոխություններ կատարելու մասին հայտարարություն:

Հայտարարության համաձայն՝ Ընթացակարգի փոփոխության հիմք է հանդիսացել նույն ընթացակարգի հրավերը գնանշման հարցման հին օրինակելի ձևով հրապարակելը, որտեղ բացակայում էր որակավորման ապահովման պահանջը և առկա էր ՀՀ ՊԵԿ-ին ուղարկվող հարցման պահանջը: Միաժամանակ հրավերով լիցենզիայի պահանջ էր դրվել, որի պահանջը փոխարինվում է որոկովորման ապահովման տուժանքով և վճարման պահանջագրով: Փոփոխության հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն որոշումը:

Ընթացակարգի հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 28.01.2020թ.-ին հայտ է ներկայացրել նաև «Արմստրոյ» ՍՊԸ-ն և ներկայացրած գնային առաջարկով՝ հայտնել է, որ ուսումնասիրելով «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-20/03» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը և առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեքը (Ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Թալին համայնքի Թամանցիներ, Մեխանիզատորներ, Կոմիտասի և Շիրազի փողոցների ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	1 100 000		1 100 000

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Արմստրոյ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է սխալ հավելվածներով՝ սխալ է լրացված Հավելված 2-ը (գնային առաջարկը), ինչով պայմանավորված Հանջնաժողովը որոշել է մերժել վերջինիս հայտերը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Արմստրոյ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկը ներկայացվել է աշխատանքների կատարման արժեքի (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, սակայն ընթացակարգի հրավերի թիվ 5.2-րդ կետի համաձայն՝ գնային առաջարկը պետք է ներկայացվեր ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-20/03» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով

մասնակցի հայտը՝ գործել է իրավաչափ՝ հիմք ընդունելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Հրավերի 5.2-րդ կետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արմստրոյ» ՍՊԸ-ի կողմից 03.10.2019թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/12 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**